1918 թվի յունուարի կէսերին, Շամքորի արիւնոտ դէպքերից յետոյ, ընդհատուեց երկաթուղային կապը, և Բաքուն կտրուեց Թիֆլիսից ու Ղարաբաղից: Բաքու–Գանձակ ճանապարհը մնաց թուրքերի ձեռքը: Պատահաբար անցնող գնացքներով հայերը չէին կարող ճամբորդել. նրանց հանում էին վագոնից ու տեղն ու տեղը սպանում: Այդ պատճառով, Բաքուում կուտակուում էին աւստրիերէրմանական ճակատից տուն վերադարձող հազարաւոր հայ զինուորներ, որոնք անգործ թափառում էին փողոցներում, շատ թշուառ վիճակի մէջ: Նրանց ջղայնացնում էին Ղարաբաղից, Գանձակից և հայաբնակ ուրիշ վայրերից հասնող լուրերը հայ–թրքական ընդհարումների մասին: Բաքուում նրանք պայթուցիկ նիւթ էին, որ հեշտութեամբ կարող էին գործիք դառնալ բոլշևիկ և ուրիշ անիշխանական տարրերի ձեռքին: Ուստի, Ազգ. Խորհուրդը իր վրա առաւ նրանց հոգատարութիւնն ու կազմակերպումը՝ նպատակ ունենալով պատրաստել կանոնաւոր զինուորական մասեր և ուղարկել ռազմաճակատ:

Հայկական զօրամասերի կազմակերպման գործը յանձնուեց Համազասպին: Որոշուեց կազմել 1200 հոգինոց մի գումարտակ: Այս քայլը առաջ բերեց արտակարգ ոգևորութիւն: Արձանագրուել ցանկացողների թիւը այնքան մեծ էր, որ շուտով ստեղծուեց 3 գումարտակից բաղկացած 3000 հոգինոց մի զօրամաս, այսպէս կոչուած, Համազասպի բրիգադը: Բացի այդ, Ազգ. Խորհուրդը կազմակերպեց 2րդ հայկական պահեստի գունդը գնդ. Ս. Եղիազարեանի հրամանատարութեան տակ: Այդ գնդի կարիքների համար, մեծ դժուարութեամբ, ստացուեց, ռուսական նախկին 279րդ գնդի գոյքերի մնացորդը: Զօրամասերի հագուստը, սարքաւորումը, ուտելիքը և այլն հայթայթում էր Ազգ. Խորհուրդը:

Միաժամանակ, Բաքուի Ազգ. Խորհուրդը իր վրա առաւ հայկական ներկայացուցչութեան դերը դաշնակիցների, Ռուսաստանի ու Պարսկաստանի նկատմամբ: Ապր. 20–ին նա Մոսկւա ուղարկեց Արտ. Զիլինգարեանին և Սիմ. Յակոբեանին՝ յանձնարարելով, որ առաջինը, Լիպ. Նազարեանի հետ միասին, յարաբերութեան մէջ մտնէ Բերլինի հետ, իսկ երկրորդը աշխատէ Ռուսաստանում: Նպատակն էր՝ ապահովել խորհրդային իշխանութեան աջակցութիւնը՝ կազմակերպելու համար հայկական զօրամասեր, օժտելու նրանց նիւթական միջոցներով ու ռազմամթերքով, ճանաչել Ազգ. Խորհրդի իրաւասութիւնը, ի հարկին, թոյլ տալ անգլիացիների մուտքը Բաքու և, առհասարակ, օժանդակել Կովկասի ինքնապաշտպանութեան գործին:

Խորհրդ. իշխանութիւնն ընդառաջ գնաց այս դիմումին. Ստալինը մի հրամանով արտօնեց հայերի զօրաշարժ կատարել և տուրք դնել հայ հարուստների վրա. խոստացուեց ռազմամթերք և անպաշտօն կերպով համաձայնութիւն տուեց, որ անգլիացիները մտնեն Բաքու: Սակայն, քիչ յետոյ, այս բարեացակամ վերաբերումը փոխուեց, և յունիսին արդէն, նոյն Ստալինը, Լենինի անունից, հեռագրում էր Շահումեանին, որ Խորհրդ. Ռուսաստանի սահմանները պէտք է հասնեն մինչև Գանձակ և Բաքուն